

սքողել է արձանագրութեան մէջ գտնուող այդ անմարսելի «սխալը», նկատի ունենալով, որ դա արձանագրութեան կեղծ լինելու ապացոյցներէն մէկն է եւ խոչընդոտ է հանդիսանում Պատրովիչի հաշիւներին: Պատրովիչը անհրաժեշտ է համարել կամովին հեռացնել այդ խոչընդոտը ընթերցողի աչքից:

Պատրովիչի այս մտահոգութիւնն աւելի է ակնհերեւ դառնում. երբ նա սկսում է զբաղուել արձանագրութեան այն օրինակով, որ հրատարակել է Կ. Նիեսիեցկին:

Պատրովիչն այստեղ, Ստարովոյսկու օրինակից յետոյ, բերում է Նիեսիեցկու օրինակը.

HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI  
PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT, ET  
LEOPOLIM ADVENIENS, ANIMAM SUAM DEO TRADIDIT 1551<sup>41</sup>.

Ինչպէս տեսնում ենք՝ այստեղ չկայ Ստարովոյսկուց ծանօթ «die 14 Ianuarij, Iulio Secundo Pontifici Max. reddidit obedientiam» յաւելումը. իսկ այդ հանգամանքը մտահոգում է Պատրովիչին եւ նա հետամուտ է լինում մի կերպ դարձանելու Նիեսիեցկու բնագրի այդ «թերութիւնը»:

Մի քանի տարի յետոյ՝ Պատրովիչը Լեհաստանի հայոց եկեղեցական պատմութեանը նուիրած իտալերէն իր հատորում նորից է բերում Նիեսիեցկու բնագրի, բայց այս անգամին՝ իրեն համար ցանկալի յաւելումով.

HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI  
PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI [ROMAE FUIT ET]  
ADVENIENS LEOPOLIM, ANIMAM SUAM DEO TRADIDIT A. D.  
1551, 14 JANUARIJ, JULIO II PONTIFICI REDDIDIT OBEDIEN-  
TIAM<sup>42</sup>.

Սակայն՝ ինչպէ՞ս էր կատարուել այս գիւտը:

Պատրովիչը թէեւ աղբիւր էր ցոյց տալիս դարձեալ Նիեսիեցկու հրատարակութիւնը, բայց այնտեղ, ինչպէս արդէն տեսանք, գոյութիւն չուներ այդ յաւելումը: Պարզուում է, որ Պատրովիչը յետին ժամանակների լեհացի հեղինակ Թ. Գրոմնիցկու մի գրքից է վերցրել այդ կարկառեալ օրինակը<sup>43</sup>: Ուրեմն՝ Նիեսիեցկու բնագրում կատարուած այդ աղաւաղման հեղինակը Գրոմնիցկին է, բայց հետաքրքիրն այդ չէ, այլ՝ այն, որ Պատրովիչը այս անգամ ձեռնասու է համարել՝ բերել հենց այդ աղաւաղումը<sup>44</sup>:

Անա թէ Պատրովիչի աշխատութիւններում ինչպէ՞ս են եղծուել Լուովի դամբանական արձանագրութեան այն հնագոյն երկու օրինակները, որոնք յայտնի են Ս. Ստարովոյսկու եւ Կ. Նիեսիեցկու հրատարակութիւններով: Այդ գործում Պատրովիչի գլխաւոր մտահոգութիւնը եղել է այն, որ Յուլիոս Երկրորդ պապը դառնայ Յուլիոս Երրորդ, որպէսզի ժամանակակից դառնայ Սալմաստեցուն եւ այդպիսով «Մեծ Հայոց պատրիարք Ստեփանոսի» անունը կրող արձանագրութեան մէջ ներքին հակասութիւն չմնայ, քանի որ նրա հարազատութիւնից է կախուած Սալմաստեցու մահուան տարին ընդունելը որպէս 1551:

41 K. Niesiecki, «Korona polska», t. I, pt 1, Lwo'w, 1728, s. 95. Այս երկի Բ հրատարակութիւնը եղել է հետեւեալ խորագրով՝ «Herbarz polski», t. I, Lipsk, 1839, s. 108. Պատրովիչը օգտագործել է միայն Բ հրատարակութիւնը:

42 PChA p. 88.

43 Tad. Gromnicki, «Ormianie w Polsce; ich historia, prawa i przywileje», Warszawa, 1889, s. 21.

44 Ուշադիր ստուգումներ կատարելով՝ պարզեցինք, որ այդ յաւելումը գոյութիւն չունի Նիեսիեցկու երկի ոչ առաջին, ոչ էլ երկրորդ հրատարակութիւնում: Գրոմնիցկին ինքն է կատարել այդ յաւելումը՝ հաւանաբար Ստարովոյսկու հետեւողութեամբ: